

**ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑՆ ՈՒ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԸ  
ՄԱՂԱՔԻԱ ՕՐՄԱՆՑԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՄԲ**

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ Է. Ա.

Մաղաքիա Օրմանյանը ծնվել է 1841 թ. Կ. Պոլսում հռոմեադավան ընտանիքում: 11 տարեկանից ուղարկվել է Հռոմ, ստացել է փայլուն կրթություն, արժանացել իմաստասիրության, աստվածաբանության և եկեղեցական իրավագիտության մագիստրոսի կոչման, ապա ընտրվել է Հռոմի աստվածաբանական կաճառի (ակադեմիայի) անդամ: Երիտասարդ Մ. Օրմանյանը զայրույթով է ընդունում պապականության ձգտումները՝ հռոմեադավան հայերին իրենց ազգային արմատներից կտրելու և հեռացնելու ուղղությամբ: Այս տրամադրություններն են արտահայտում 1870-ին և 1872-ին լույս ընծայված նրա «Հայ արեւելեան կաթողիկեայք» և «Ռեվերսուրուս կամ Թիւրքիա և պապականութիւն» իտալերեն աշխատությունները: Նույն 1872-ին, ապա 1873-ին, այս անգամ ֆրանսերեն, լույս են տեսնում Մ. Օրմանյանի «Արևելյան կաթոլիկաց կրոնական ազատութիւնը և քաղաքական իրավունքները» ու «Վատիկան և Հայք» աշխատությունները: Կաթոլիկ հոգևորականի համար մեծ հանդգնություն էր այդ աշխատությունների լույսընծայումը, քանի որ դրանք հետամուտ էին հայ ազգության պաշտպանությանը պապականության հարձակումներից: Ուստի, պատահական չէ, որ այդ չորս աշխատություններն էլ դասվեցին պապական աստիճանի արգելած գրքերի շարքը: Այդ պայքարը Մ. Օրմանյանի համար ունեցավ հաղթական ավարտ: 1879 թ. նա հոգեկան և բարոյական մեծ համոզմունքով վերադարձավ հայ եկեղեցու գիրկը՝ իր հետ բերելով 75 հռոմեադավանի: Հռոմից Կ. Պոլիս վերադարձած Մ. Օրմանյանը ժամանակի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանից ստացավ ծայրագույն վարդապետության աստիճան և իր ջանքերը ներդրեց այդ ժամանակ հայ ժողովրդին հուզող խնդիրների լուծման մեջ: Մ. Օրմանյանը հայ եկեղեցու այն սակավաթիվ գործիչներից է, որ կատարել է հոգևորականի ամենօրյա աշխատանքները (Էրզրումի հոգևոր առաջնորդ, Էջմիածնի հոգևոր ձեմարանի դասախոս, Արմաշի դպրեվանքի հիմնադիր, համիդյան զուլումի տարիներին 12 տարի անընդմեջ (1896-1908 թթ.) Կ. Պոլսի հայոց պատրիարք) և դրա հետ միասին թողել է մեծ ու անգնահատելի գիտական ժառանգություն: Սակայն երիտթուրքերի հեղաշրջումից հետո նրա պատրիարքական շրջանում վարած զուշավոր քաղաքականությունը (իր խոսքերով «գազանագուսպն ու լարախաղացը») գնահատվեց իբրև դավաճանություն ազգի շահերին և նրան ստիպեցին պատրիարքությունից հրաժարական տալ: Իր դեմ եղած ամբաստանությունները հերքելու նպատակով 1910 թ. Մ. Օրմանյանը գրեց «Յիշատակարան երկոտասան

պատրիարքություն» աշխատությունը, իսկ 1911 թ. ավարտեց «Համապատումի» (չորս ավետարանների համեմատական միացյալ տեքստը) տպագրությունը, որ աստվածաբանական ուսումնական հաստատությունների դասագիրք էր լինելու: 1911 թ. սկզբում ֆրանսերեն, ապա հայերեն լույս տեսավ Մ. Օրմանյանի՝ հայ եկեղեցու պատմությանը, վարդապետությանն ու կառուցվածքին նվիրված աշխատությունը, որը նպատակամղված էր եվրոպական ազգերին ծանոթացնելու հայ եկեղեցուն և հերքելու նրա մասին տարածված թյուր պատկերացումները: Այդ գրքի մեծ նշանակության և կարևորության մասին է խոսում 1912-ին անգլերեն, իսկ 1913-ին՝ ռուսերեն հրատարակվելը: Գրքի գնահատականը տվեց Բերտրան Բարեյը՝ նշելով հեղինակի ուղղամտությունը, համոզմունքը, «այլև միտքի այնպիսի անկախություն մը, որ զարմանք կպատճառէ Եւրոպայի ընթերցողներու, որոնք վարժ չեն այսպիսի ազատութեամբ գրող եկեղեցականներու հանդիպիլ»<sup>1</sup>: Մ. Օրմանյանը 1917-ին ավարտում է «Խոհք և խոսք» ինքնատիպ հուշագրությունը: Նշված գործերի արժեքը մեծ է և անչափ կարևոր, սակայն դրանցից ոչ մեկը չի կարող համեմատվել կոթողային «Ազգապատումի» երեք հատորներից որևէ մեկի հետ: «Ազգապատումի» Ա և Բ հատորները լույս տեսան 1912-ին, իսկ Գ հատորը՝ հետմահու, 1927-ին: Հատորներին նույնիսկ թռուցիկ ծանոթությունն ընթերցողին ապշեցնում է բովանդակության հարստությամբ, խորքով ու լայնքով: Մեր եկեղեցու և ժողովրդի երկուհազարամյա պատմությունն է դա, որ մեր օրերին կարող էր կատարել մի մեծ գիտական հաստատություն: Հենվելով հայ պատմիչների, ապա գիտնականների՝ իր ժամանակ հայտնի աշխատությունների վրա, նա մեր բազմադարյան պատմության ամեն մի ակնառու երևույթի տալիս է սեփական գնահատականը: Ա հատորի հետաքրքիր էջերից է Մեսրոպ Մաշտոցի և հայ գրերի գյուտի ստեղծման պատմությունը: Հիմք ընդունելով այդ հարցի առաջնային սկզբնաղբյուրները՝ Կորյուն, Ղազար Փարպեցի և Մովսես Խորենացի, նա քննում է մեր ժողովրդի պատմության մեջ ծանրակշիռ այդ խնդիրը և հայտնում իր կարծիքը, ուրույն տեսակետը: Մինչև կոնկրետ թեմային անցնելը Մ. Օրմանյանն անդրադառնում է ժամանակի հայոց կաթողիկոսի և թագավորի՝ Սահակ Պարթևի և Վռամշապուհի գործունեության ժամանակաշրջանին: Այդ երկու պատմական անձնավորություններն էլ արժանանում են Մ. Օրմանյանի բարձր գնահատականին: Նա համաձայնվում է Փարպեցու ներկայացրած փաստի հետ՝ մեկնաբանելով Վռամշապուհի անունը. պարսից թագավոր Վռամ Կրմանն իր անվանը կցում է հոր՝ Շապուհի անունը և իր կողմից բանտարկված հայոց Խոսրով թագավորի եղբորը՝ Վաղարշ Պահլավիկին, վերանվանում Վռամշապուհ, հռչակում հայոց թագավոր: Որովհետև Սահակը կաթողիկոս էր օծվել Խոսրովի ժամանակ, թվում է, նա անօրինական պետք է համարվեր պարսից արքայի կողմից: Սակայն, երբ Սահակը մեկնեց Տիգրն, պարսից արքայի վրա մեծ ազդեցություն գործեց նրա «խոհական ընթացքը» և Վռամի «պետական վաերացմամբ

<sup>1</sup> Օրմանեան Մ., Հայոց եկեղեցին եւ իր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը ու ներկայ կացութիւնը, Կ. Պոլիս, 1911, էջ 10:

ճանչցուեցավ նորա կաթողիկոսական պաշտօնը»<sup>2</sup>: Սահակի շնորհիվ Վրամշապուհին թույլատրվեց անել այն, ինչ արգելվում էր Խոսրովին: Այդ երկու պետական-քաղաքական և հոգևորական ականավոր այրերի գործունեությունը Մ. Օրմանյանը հասցնում է մինչև 404 թ., իր կարծիքով գրերի գյուտի թվականը: 389 թ. համարելով Վրամշապուհի թագավորության առաջին տարին՝ նա գտնում է, որ այդ երկար ժամանակահատվածը՝ 15 տարին, «առանց պատմութեան կը մնայ», որովհետև պատմիչները լռում են այդ տարիների մասին: Այդ լռությունը Մ. Օրմանյանը համարում է «գերազանց պատմութիւն», երբ շարունակական պատերազմների, կործանման ու քայքայման եզրին կազնած երկրին և «ազգին շունչ առնելու միջոց մը շնորհվեց»<sup>3</sup>: Հայաստանի թագավորն ու կաթողիկոսը «ձեռք ձեռքի տուած կրցան երկրին բարգաւաճման և զարգացման աշխատիլ»: Հենց նրանք էին, որ նպաստեցին և «պատրաստեցին ազգը այնպիսի մի մեծ հաջողութեան, որը նորա ապագային երաշխավորութիւնը պիտի ըլլար Հայ դպրութեան սկզբնաւորութեամբ»<sup>4</sup>: Այդ երկուսի կյանքի անհրաժեշտ տարեթվերը պարզելուց հետո Մ. Օրմանյանն անդրադառնում է երրորդ և ամենակարևոր անձ Մեսրոպ Մաշտոցին՝ «Սահակի անբաժան ընկերակցին և հարազատ ամուլակցին»:

Մ. Օրմանյանը նրա առաջին անունը համարում է Մաշթոցը, ծննդավայրը՝ Տարոնի Հացիկ գյուղը, ծագումը՝ Մամիկոնյան ազգի կամ ցեղի շառավիղ, այսինքն՝ նրան վերագրում է ազնվական ծագում և հավելում. «քանի որ արքունիքի մեջ պաշտոնավարութեամբ ռամիկ դասակարգէ չլինելն ալ կը վկայուի»<sup>5</sup>: Այս մասում Մ. Օրմանյանի պատմողական ոճը վերածվում է ակնհայտ վիճաբանականի: Ծանոթանում ենք մինչ այդ Մաշտոցի մասին հայ գիտնականների հայտնած տարբեր կարծիքներին և համոզվում դրա մեջ: 1904 թ. Լեոն հրատարակեց «Մեսրոպ Մաշտոց» աշխատությունը, որտեղ նշվում էր Մաշտոցի՝ գյուղացու որդի լինելը: Ըստ Լեոյի, Խոսրովի ժամանակ հայոց արքունիքում որպես դպիր կամ դպրապետ ծառայում էր մի հասարակ գյուղացու որդի, մի հայ, որը Տարոն գավառի Հացիկ կամ Հացեկաց գյուղից էր<sup>6</sup>: Այդ վարկածը, առանց որևէ փաստարկի, պաշտպանել են նաև Ակինյանը<sup>7</sup> և Մալխասյանը<sup>8</sup>: Հակառակ դրանց՝ Աճառյանը<sup>9</sup> Մ. Օրմանյանի օրինակով նշում է, որ Հացիկ գյուղը մանր կամ երկրորդական ազնվականների կենտրոն էր: Մենք համաձայնվում ենք Մ. Օրմանյանի և Հ. Աճառյանի հետ: Մաշտոցը չէր կարող հասարակ գյուղացի լինել:

Մ. Օրմանյանը Մաշտոցի ծննդյան թիվը ընդունում է 353 թ.՝ 5 տարի փոքր Սահակ Պարթևից: Ինչպես գիտենք, այսօր ընդունված է 361 թվականը:

<sup>2</sup> Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Ա, Մ. Էջմիածին, 2001, էջ 301:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 302:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 302-303:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 303:

<sup>6</sup> Լեո, Մեսրոպ Մաշտոց, Ե., 1962, էջ 48:

<sup>7</sup> Ակինյան Ն., Մ. Մաշտոց վարդապետ, Վիեննա, 1949:

<sup>8</sup> Մալխասյան Մտ., Հայոց գիրը (Տարագ N 3, 1893):

<sup>9</sup> Աճառյան Հ., Հայոց գիրը, Ե., 1968:

Քանի որ Սահակ Պարթևն էլ Տարոնից էր, Մ. Օրմանյանը նրանց համարում է «մանկություննին միասին անցուցած» հին ծանոթներ: Նա Մաշտոցին համարում է «Ներսեսի հաւատարիմ աշակերտներէն»: Այդ վարկածը ժխտում են նաև Ն. Աճառյանը, և՛ Լեոն՝ բերելով համոզիչ փաստարկներ: Մ. Օրմանյանը 394 թ. համարում է Մեսրոպին արքունի դպրի ծառայությունից հետո հոգևորական դառնալու տարին, երբ նա իր հաշվով 40 տարեկան հասունացած այր էր և «ոգեւորութեան բուն թափով մը իր նոր կոչումին կը նուիրուէր»<sup>10</sup>: Լեոն քննադատում է Կորյունին, որ իր «Վարք Մաշտոցի» աշխատության մեջ հայ ժողովրդի հանձարեղ զավակին անընդհատ անվանում է Մաշտոց, իսկ ինքը ավելի հավատ է ընծայում Սովսես Խորենացուն, որը գրում է Մեսրոպ: Առանց ստուգաբանումներ կատարելու՝ Լեոն ճշմարիտը համարում է Խորենացուն: Այլ մոտեցում է հանդես բերում Մ. Օրմանյանը: Նա Մաշտոցը համարում է նրա ծննդյան անունը, իսկ Մեսրոպն այն անունն է, որ ընդունեց «եկեղեցական ձեռնադրութեան մեջ»<sup>11</sup>: Մեսրոպ անունը Մ. Օրմանյանը մեկնաբանում է իբրև Մար Սերոբ կամ Տէր Սերոբէ: «Ազգապատումի» բեյբութեան հրատարակության ծանոթագրողը Տէր Սերոբը կամ Մար Սերոբը մեկնաբանում է իբրև *սերովբէ* կամ *սրովբէասես* բառերով: Այդ հետազոտողը բացատրում է նաև Մաշտոց անվանումը՝ համաձայնվելով Ա. Գարագաշյանի հետ, որը Մաշտոցը համարում է «Մաստոս» բառից առաջացած, որը «կը նշանակի բարձրութիւն իբրև եկեղեցական տիտղոս»<sup>12</sup>: Այստեղ բախվում են երկու տեսակետ. ո՞րն է անունը, ո՞րը եկեղեցական վերանվանումը. մենք համաձայնվում ենք Կորյունի և Մ. Օրմանյանի կարծիքներին. Մաշտոցը՝ անունը, Մեսրոպը՝ եկեղեցական վերանվանումը:

Անունների բացատրությունից հետո Մ. Օրմանյանն անցնում է Մեսրոպ Մաշտոցի եկեղեցական գործունեության վերհանմանը: Նա չի համաձայնվում Կորյունի այն վկայության հետ, ըստ որի, քրիստոնեական կրոնը տարածելու համար Մաշտոցը մեկնեց «Գողթն գավառը, յանկարգ և յանդարման տեղիս, ուր կար տակաւին զօղեալ աղանդն հեթանոսական, անդստին Տրդատի օրերէն անմատոյց լեռներու մէջ պահուրտած»<sup>13</sup>, գրելով հետևյալը. «յարմարագոյն կը կարծենք Բորբորիտոն աղանդաւորներու վրայ իմանալ»<sup>14</sup>: Այդ բացատրությունը, մեր կարծիքով, ճիշտ չէ: Գողթնը այն գավառն էր, ուր խորունկ արմատներ էր ձգել հայ հեթանոսությունը, և պահպանվել և Խորենացուն էին հասել հեթանոսական շրջանի ժողովրդական ասքերն ու ավանդությունները:

Մ. Օրմանյանը միանգամայն ճիշտ է բացատրում Սուրբ Գիրքը և քրիստոնեության էությունը ժողովրդական լայն զանգվածներին հասկանալի դարձնելու դժվարությունը: Սուրբ Գիրքը մեկնողներն ու վերծանողները պետք է այն ասորերեն կամ հունարեն կարդային ու նոր միայն բացատրեին հայերին: Այն,

<sup>10</sup> Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Ա, էջ 304:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 305:

<sup>12</sup> Նույն տեղում, հ. Գ, Ե., 2002, էջ 122:

<sup>13</sup> Նույն տեղում, հ. Ա, էջ 305:

<sup>14</sup> Նույն տեղում:

ինչ փորձով զգում էր Մերոպը, նորություն չէր: Դեռևս շուրջ 100 տարի առաջ՝ քրիստոնեությունն ընդունելուց ի վեր, այդ դժվարությունը զգում էր նաև Գրիգոր Լուսավորիչը: Արքունի քարտուղարից հոգևոր պաշտոնյա դարձած Մերոպը տառապում էր, թե ինչու «հնար պիտի չըլլայ ինքեան ձայնիս և ոչ մուրացածոյ բարբառով, մայրենի լեզուով և ոչ օտարի լեզուով շահիլ զոգիս արանց և կանանց առհասարակ յամենայն եկեղեցիս»<sup>15</sup>: Մեջբերելով Ղազար Փարպեցու վերոհիշյալ խոսքերը՝ Մ. Օրմանյանը հանգում է բոլորի կողմից ընդունված եզրակացության. «Ահաասիկ Հայ գիրի գիտին և Հայ դպրութեան սկսելուն բուն և ներքին շարժառիթը»<sup>16</sup>: Այդ ապրումների, տարակույսների և տագնապների ժամանակ Մաշտոցը լսում է, որ կան հայոց լեզվի նշանագրեր: Լուրի ստուգությունը ճշտելու համար նա գնում է կաթողիկոսի մոտ: Քանի որ Սահակ Պարթևին էլ էին համակել նույն ապրումները, Մերոպի լուրը «իբրեւ յուսոյ դուռ» ընդունելով, միասին դիմում են Վռամշապուհին՝ նրան փոխանցելով իրենց մտորումները, հայոց նշանագրերի հայտնաբերումը համարելով ավելի մեծ գործ, քան ողջ «գիշխանութիւն թագավորութեանդ»<sup>17</sup>: Ընդգծելով Ղ. Փարպեցու այդ խոսքերը, Մ. Օրմանյանը ցույց է տալիս, որ հայոց թագավորը, կաթողիկոսն ու Մաշտոցը հավասարապես համոզված էին «հայ գիրի մը անհրաժեշտ հարկին վրայ»<sup>18</sup>:

Վռամշապուհը լսել էր, որ Դանիել Ասորու մոտ կան հայկական նշանագրեր: Դա այն ժամանակ էր, երբ ինքը պարսից թագավոր Վռամի հրամանով մեկնել էր Միջագետք՝ հունական և պարսից գորգերի միջև եղած թշնամությունները խաղաղեցնելու նպատակով: Վռամշապուհը Միջագետքից վերադարձավ 402 և 403 թվերի միջև ընկած ընթացքում, այդ ժամանակ էլ իր մոտ եկան Սահակն ու Մերոպը՝ իրենց մտահոգությունները փոխանցելով հայոց թագավորին: Վերջինս, ընդառաջելով նրանց, հայոց նշանագրերը Դանիելի մոտից բերելու համար Միջագետք ուղարկեց Վահրիճ անունով մի անձնավորության: Ո՞վ էր Վահրիճը: Ըստ Մ. Օրմանյանի՝ նա Սահակի կամ Մերոպի աշակերտներից չէր, որովհետև չկար այդ անունների շարքում, հետևաբար՝ «թագավորական դիւանի պաշտոնեայններէն գլխավոր մը, օտար լեզուաց ալ հմուտ»<sup>19</sup>: Մինչ նա Միջագետք կհասներ, Սահակն ու Մերոպը հավաքեցին բոլոր եպիսկոպոսներին, որպեսզի «նոր գիրին և ազգային դպրութեան տարածման համար միջոցներ» կարգադրեն: Այդ ընթացքում Վահրիճը հասավ Միջագետք, գտավ Հաբել քահանային և միասին դիմեցին Դանիելին: Մ. Օրմանյանը գրում է, որ աղբյուրները չեն ասում, թե որ քաղաքում էր ապրում Դանիել եպիսկոպոսը և դրա հետ ընդգծում, թե ինչպես այդ գործում ներգրավեցին Դանիելին. «ով գիտե՛ ինչ պայմաններով, որպեսզի իր մոտ գտնուող ծածկեալ գանձը երեւան հանէ և իրենց հաղորդէ ու սորվեցնէ այդ

<sup>15</sup> Ղազար Փարպեցույ պատմութիւն հայոց, Տիղիա, 1904, էջ 14, նաև Ազգապատում, հ. Ա, էջ 306:

<sup>16</sup> Օրմանյան Մ., Ազգապատում, հ.Ա., էջ 306:

<sup>17</sup> Ղազար Փարպեցի, էջ 14:

<sup>18</sup> Օրմանյան Մ., Ազգապատում, հ.Ա., էջ 307:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 309:

անկատար գիրերուն ձենն ու ձայնը ու կիրառութիւնը»<sup>20</sup>: Վահրիճի Հայաստան վերադարձը Սահակն ու Մեսրոպն ընդունեցին մեծ ցնծությամբ: Ըստ Մ. Օրմանյանի՝ Դանիելյան նշանագրերը Հայաստան են մուտք գործել 404 թ.: Նա ավելացնում է, որ գիտնականներն այդ թիվն են համարում հայոց գրերի գյուտի ժամանակը՝ չնայած դա «հայ այբուբենին կատարեալ կազմութիւնը չէր»<sup>21</sup>: Ի՞նչ էին այդ նշանագրերը. Մ. Օրմանյանը թվարկում է բազմաթիվ կարծիքներ՝ առաջին շարքում դնելով Մ. Խորենացու և Ղ. Փարպեցու մտքերը և հենվելով դրանց վրա, գրում է, թե «կային անգործածական թողնուած տառեր, զորս Մեսրոպ հունական ավիաբետի առաջնորդութեամբ կարգի կանոնի վերածեց»<sup>22</sup>: Այդ կարծիքների թվարկումը համարելով բանասիրական պրպտումներ պատմագիր Մ. Օրմանյանն արձանագրում է. «դանիելեան նշանագիրները հայ դպրութեան սկզբնավորութիւնը նուիրագործեցին»: Այդ կարծիքն այնքան էլ ճիշտ չէ: Դպրոցներում Դանիելյան նշանագրերի ուսուցման ընթացքում պարզվում է դրանց պակասությունը և անհամապատասխանությունը հայերենի հնչյունական համակարգին: Ինչքան ժամանակ պահանջվեց այդ կարծիքին հանգելու համար: Հետագոտողները գտնում են, որ «ամն երկու» բառերը նշանակում են ոչ թե երկու տարի, այլ գրիչները սխալ են թույլ տվել մի վանկ՝ իս-ը բաց թողել, որի դեպքում կլիներ «ամիսս երկու», ոչ թե երկու տարի: Մեզ թվում է, կարելի է համաձայնել այդ ենթադրությանը, որովհետև երկու տարին մեծ ժամանակ էր այդ իրողությունը հասկանալու համար: Վռամշապուհն ու Սահակն այդ մասին իմանալուց հետո որոշում են, որ «նորագիտ նշանագիրները կատարելագործելու և ըստ ամենայնի հայերեն բառերու հնչիւններուն համարեցնելու համար»<sup>23</sup> Մեսրոպն ինքը մեկնի Միջագետք, հանդիպումներ ունենա Դանիել Ասորացու, Պլատոն Եդեսացու և Եպիփան Սամոսատցու՝ ժամանակի նշանավոր գիտնականների հետ և նրանց օգնությամբ «վերջնական և կատարելագործեալ նշանագիրներ պատրաստե»<sup>24</sup>: Մեսրոպն իր հետ է վերցնում իր լավագույն աշակերտներին. հիշատակվում է չորս անուն՝ Հովհան Եկեղեցացի, Հովսեփ Պաղնացի, Տիրայր Խորձենացի և Մուշե Տարոնեցի: Միջագետքում Դանիելի և Պլատոնի խորհուրդները Մաշտոցին չեն օգնում՝ «լույս մը չեն ստանար»: Բարիլասի օգնությամբ Մեսրոպը գալիս է Սամոսատ, որտեղ իմանում է, որ Եպիփանը վախճանվել է: Որևէ արդյունք չի տալիս նաև Հռոփանոսի հետ խորհրդակցելը: Այստեղ Մ. Օրմանյանը մեջբերում է կատարում Մ. Խորենացուց և Կորյունից, որ Մեսրոպն ապավինեց աղոթքին և ոչ քուն, ոչ արթուն տեսնում է, թե ինչպես «թաթ ձեռին աջոյ, գրելով ի վերայ վիմի Ա, Ե, Է, Ը, Ի, Ո, Ու»<sup>25</sup>, յոթ ձայնավորներ, որոնք դանիելյան նշանագրերի հետ լրացրին հայերենի այբուբենը: Մ. Օրմանյանն այս հարցը քննելիս գրում է, որ Ղ. Փարպեցին զանց է

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 310:

<sup>21</sup> Նույն տեղում:

<sup>22</sup> Նույն տեղում:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 311:

<sup>24</sup> Նույն տեղում:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 312:

առնում և՛ Մերոպի շրջագայությունը, և՛ աստվածային տեսիլքը, մինչդեռ Կորյունը, որ Ղ. Փարպեցու աղբյուրն է, շեշտում է և՛ շրջագայությունները, և՛ «Աստուծոյ սքանչելի սուրբ աջը»: Հետաքրքիր է Մ. Օրմանյանի կարծիքն այս հարցում. աստվածային տեսիլքին նա տալիս է միանգամայն բանական պատասխան. մեր սուրբ հայրերը առանց աղոթքի ոչ մի գործի ձեռնամուխ չէին լինում և ամեն հաջողություն վերագրում էին աստվածային աջին: Այսինքն՝ նա գտնում է, որ կատարվածի անմիջական հեղինակը Մերոպն է: Սակայն այստեղ էլ Մ. Օրմանյանի առաջ կանգնում են հարցականներ. ի՞նչն էր Մերոպի գյուտը. արդյո՞ք միայն ձայնավորները: Ապա նա սկսում է բացատրել, որ Դանիելյան՝ նշանագրերը ասորական կամ սեմական հիմք ունեին: Սահակն ու Մերոպը՝ հունական դպրության հմուտ անձինք, հետամտում էին ստեղծել հունալատին այբուբենի նման ձայնավորներով գրեր, ուրեմն Մ. Օրմանյանը հաստատում է, որ Մաշտոցի գյուտը եղել են 7 ձայնավորները: Հռոփանոսի օգնությամբ տառերին գեղագրական ձև տալուց հետո Մերոպը վերադառնում է Հայաստան: Ղ. Փարպեցու հետևողությամբ Մ. Օրմանյանը գրերի կատարելության հասցնելը վերագրում է Սահակին: Ըստ նրա՝ Մերոպը շրջագայության ժամանակվա բոլոր հաջողությունները՝ «ամենքն ալ ժողուեց բերաւ եւ Սահակի գերագոյն դատաստանին ենթարկեց. եւ Սահակի ցուցուցած ուղղութիւններով եւ տուած կատարելագործութիւններովն է, որ հայերէն այբուբենը իր վերջնական թիւն ու կարգը, ձեւն ու հեզենան ստացավ»<sup>26</sup>: Դրան համաձայնել չենք կարող: Այդ հարցում պետք է հետևել Կորյունին և ոչ թե Ղ. Փարպեցուն, մանավանդ որ իր գործի հաջողությունը Մերոպը հավաստեց դեռ Միջագետքում, երբ ձեռնամուխ եղավ Աստվածաշնչի թարգմանությանը: Այն հանգամանքը, որ Մերոպի գյուտը լրիվ համապատասխանում էր հայերենի հնչյուններին՝ ամեն տառին մի հնչյուն, հավաստում է Մ. Օրմանյանը. «հայերենի հնչիւնները շատ ավելի ձայներ ունէին, որոնք յունարէնի մէջ չէին գտնուեր, մանաւանդ բաղաձայներու շարքին»: Որ Սահակը շատ է օգնել Մերոպին, դրա մեջ տարակույս չկա, բայց որ գյուտը լրիվ Մերոպինն է, այդ հարցում ևս այժմ ոչ մի կասկած լինել չի կարող:

Դրանից հետո Մ. Օրմանյանն անցնում է ազգային դպրոցներ բացելու և հայոց գրերը հայ մանուկներին ուսուցանելու պատմությանը: Մերոպը հավաքում է 40 աշակերտներ, «որք առհասարակ Թարգմանիչ անունով ճանչցուած էին և եկեղեցական թարգմանութեանց պաշտօն կը վարէին»<sup>27</sup>: Այն ժամանակ գրերի գյուտի առաջին և գլխավոր նպատակը համարվում էր Սուրբ գրքի հայերեն թարգմանությունը: Այդ իսկ պատճառով դեռ Միջագետքում Մաշտոցը ձեռնամուխ եղավ դրա թարգմանությանը՝ իր աշակերտներ Հովհան Եկեղեցացու և Հովսէփ Պաղնացու օգնությամբ: Մ. Օրմանյանը հավելում է, որ միջագետքյան թարգմանությունն այնքան էլ կատարյալ չէր, որովհետև թարգմանված էր ասորական Սուրբ Գրքից, իսկ Հայաստանում Սահակը սկսեց թարգմանել հունական տարբերակից: Երկուսի միասնական ջանքերով ստացվեց Սուրբ Գրքի

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 314:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 316:

կատարյալ թարգմանությունը, որը Մ. Օրմանյանն այս անգամ ևս վերագրում է Սահակին: Հոգևորական Մ. Օրմանյանը մանրամասն թվարկում է, թե ինչ ծիսական գրքեր թարգմանվեցին Մեսրոպի և Սահակի կողմից. պատարագամատույցը, ձեռնադրությանց կանոնները, աշխարհաթաղը, սերմնօրհնեքը, ապա՝ մկրտության, նշանի ու պսակի, թաղումների ծեսերի կանոնները: Քանի որ այդ կանոնները պարունակող ծիսարանը կոչվում էր Մաշտոց, Մ. Օրմանյանը եզրակացնում է, որ դրա թարգմանիչը եղել է Մեսրոպ Մաշտոցը, հաղորդելով, որ որոշ ուսումնասիրողներ այդ գործը վերագրել են Մաշտոց Եղիվարդեցի կաթողիկոսին: Մ. Օրմանյանը բարձր է գնահատում Սահակի և Մեսրոպի մտքի թռիչքը՝ «մտաց ընդարձակությունը և գործին մեծությունը», որ նրանց օրոք և եռանդուն մասնակցությամբ հայերեն թարգմանվեցին Բարսեղ Կեսարացին ու Հովհան Ոսկեբերանը, Եփրեմ Ասորին և Գրիգոր Սքանչելագործը, Գրիգոր Աստվածաբանն ու Գրիգոր Նյուսացին և «առաջին դարերու ընտիր գրողներ»<sup>28</sup>: Ի պատիվ հոգևորական Մ. Օրմանյանի՝ ասենք, որ նա առավել բարձր է գնահատում փիլիսոփայական և պատմագիտական բարձրարժեք աշխատությունների թարգմանությունը, որի շնորհիվ Արիստոտելը, Պլատոնը, Փիլոնն ու Պորփյուրը, ինչպես նաև Եվսեբիոս Կեսարացու պատմությունն ու քրոնիկոնը մատչելի դարձան հայությանը:

«Ազգապատումի» բեյբության հրատարակության ծանոթագրությունների հեղինակը մեծ գործ է կատարել՝ պարզաբանելով Մ. Օրմանյանի մոտեցումները գրերի գյուտին վերաբերող տարբեր հարցերին. Մաշտոցի ծննդավայրը, նրա ազնվական ծագումը, ով էր Գողթնի իշխան Շաբաթը, ով Եղեսիո Բաբիլաս Եպիսկոպոսը, ինչպիսի՞ն է Հռոֆանոսի դերը հայ գրերի հորինման մեջ և բազմաթիվ այլ հարցեր: Դրանք ոչ թե սուկ ծանոթագրություններ են, այլ ինքնատիպ գիտական աշխատանք: Ցավոք, չի նշված ծանոթագրության հեղինակի ինքնությունը: Վերն ասվածն ավարտենք գրերի գյուտի կարևորության շուրջ Մ. Օրմանյանի խորհրդածությունների գնահատությամբ: Նա ընդգծում է, որ գրերի գյուտն անգնահատելի ծառայություն մատուցեց մեր ազգին և եկեղեցուն՝ նրա հարատևության գործում: Եթե չլինեք հայոց գիրը, մեր եկեղեցին չէր պահպանի իր ինքնությունը և կձուլվեր քրիստոնյա այլ եկեղեցիներին: Սակայն ամենակարևորը հայապահպանության հարցն էր: Իր «քաղաքական կացության գործությունը», այսինքն՝ պետականությունը կորցրած հայն առանց այդ գրի կանհետանար պատմության թատերաբեմից, ինչպես մարերն ու պարթևները, ասորեստանցիներն ու բաբելացիները: «Գիրն ու գիրքը եկեղեցիով, եկեղեցին ալ գիրով ու գիրքով, իրարու անբաժան փաթեռուած, դարերու փորձանքներուն, հայուն անլուր տագնապներուն, հայութեան անըմբերելու վտանգներուն դէմ անվկանդ ուժ մը կազմեցին», - գրում է Մ. Օրմանյանը, - «Եթէ տակաւին հայ կայ և հայութիւն կայ եթէ մտաւորական կենաց յաջողակ և քաղաքական կենաց ընդունակ սերունդ մը, ազգ մը՝ ընդհանուր աշխարհի զարմանքը կը գրավէ, զայն պէտք է իրաւամբ

<sup>28</sup> Նույն տեղում:



Սահակի և Մեսրոպի անմահական գործին արդիւնքը ճանչնալ և խոստովանիլ»<sup>29</sup>: Մենք էլ Մ. Օրմանյանի և մյուս բոլոր սերունդների նման խոնարհվում ենք նրանց խնկելի հիշատակի առջև, մի փոքրիկ վերապահությամբ՝ առաջինը շեշտելով Մեսրոպի անունը: Չլինէր Մեսրոպը, ինչքան էլ օժանդակէր Սահակը, չէր լինի այս գյուտը: Համաձայն ենք Մ. Օրմանյանի հետ, որ այս գործը հայոց եկեղեցու թագն ու պսակն է: Մենք էլ կհավելենք՝ ողջ հայ ժողովրդի:

## МЕСРОП МАШТОЦ И СОЗДАНИЕ АРМЯНСКОЙ ПИСЬМЕННОСТИ В ОЦЕНКЕ МАЛАКИЯ ОРМАНЯНА

КОСТАНДЯН Э. А.

### Резюме

Выдающийся историк армянской церкви Малакия Орманян в первом томе своего монументального труда “Ազգապատմություն” (Ազգապատմություն) обсуждает многочисленные вопросы, связанные с созданием армянской письменности, с этимологией имени Маштоца (Маштоц и Месроп), с историческим периодом его деятельности и т. д. Согласно М. Орманяну, создание алфавита давало возможность донести до широких народных масс святое писание – Библию, а также явилось великим орудием защиты и сохранения самобытности как армянской церкви, так и армянского народа.

---

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 325: